

| Ն ա խ ա ր ա ն | INTRODUCTION |
|--|--|
| <p>«Գները և գների ինդեքսները Հայաստանի Հանրապետությունում, 2015» վիճակագրական ժողովածուն պարունակում է գների և գների ինդեքսների մասին առավել ամբողջական վիճակագրական ցուցանիշներ, որոնք կարող են լուսաբանել գնային փոփոխությունների հետ կապված ՀՀ տնտեսության տարբեր ոլորտներում տեղի ունեցած գործընթացները:</p> <p>Ժողովածուն պարունակում է վերջին հինգ տարում, առանձին դեպքերում նաև ավելի երկար ժամանակահատվածում, հանրապետության սպառողական շուկայում, արդյունաբերությունում, գյուղատնտեսությունում, շինարարությունում, արտաքին առևտրում, բեռնափոխադրումների գծով գների և սակագների մակարդակի ու փոփոխությունների մասին վիճակագրական տվյալներ: Առանձին ցուցանիշների գծով կատարվել են նաև միջազգային համադրումներ և համեմատություններ:</p> <p>Տեղեկատվությունը ներկայացվում է, ինչպես Հայաստանի Հանրապետությունով, այնպես էլ ՀՀ առանձին մարզերով (դիտարկվող բնակավայրերով), տնտեսության տարբեր ոլորտներով, ապրանքային խմբերով ու ապրանք-ծառայության տեսակներով:</p> <p>Տվյալները հաշվարկված են արդի մեթոդաբանության սկզբունքներին համապատասխան, ինչը հնարավորություն է տալիս դրանք համադրել միջազգային համանման ցուցանիշների հետ: <<Միջազգային համեմատություններ>> բաժնի (էջ` 53) աղյուսակները համապատասխան ցուցանիշներով կազմված են ըստ ԱՊՀ միջպետական վիճակագրական կոմիտեի տվյալների:</p> <p>Գների դիտարկման և գների ինդեքսների հաշվարկման մեթոդաբանական պարզաբանումները բերված են առանձին հատվածով:</p> <p>Ժողովածուն նախատեսված է հանրության լայն սպառողների` պետական կառավարման մարմինների, գիտական և ուսումնական հաստատությունների, տնտեսագետների, կազմակերպությունների և այլ սպառողների համար:</p> | <p>“Prices and price indexes in the Republic of Armenia, 2015” statistical handbook consists of the most complete statistical indicators on prices and price indexes that could illustrate processes related to the price changes taken place in different spheres of RA economy.</p> <p>Handbook includes the statistical data on the level and changes of prices and tariffs in the republican consumer market, industry, agriculture, construction, foreign trade, on freight transportation over the last five years, in some cases, for the longer period. International comparisons have also been done for separate indicators.</p> <p>The information is presented by the Republic of Armenia, as well as by RA separate marzes (observed settlements), different spheres of economy, commodity groups and goods-services types.</p> <p>The data have been calculated according to the principles of modern methodology that enables to compare them with the same international indicators.</p> <p>The tables with the appropriate indicators from the part “International comparisons” (page 53) are created according to the data of Inter-State Statistical Committee of CIS countries.</p> <p>Separate chapter represents methodological explanatory notes on observation of prices and calculation of price indexes.</p> <p>The handbook is foreseen for the wide circle of users, i.e. state governmental bodies, scientific and educational institutions, economists, organizations and other users.</p> |

Պայմանական նշաններ
Explanations of symbols

| | | |
|--|-----|--|
| Դիտարկման պահին ապրանքատեսակը (ծառայության տեսակը) բացակայել է | ... | At the observation moment goods (services) were not available |
| Գների դիտարկում կամ ինդեքսների հաշվարկ չի կատարվել | - | The observation of prices or calculation of indexes has not been implemented |
| Տվյալները ճշգրտվել են | ◇ | Data are adjusted |

Օգտագործված համառոտագրություններ
Abbreviations

| | | | | | | | |
|----------------|----------------|----------------|--------------|-------|----------------|------|-----------------|
| մ | մետր | m | metre | տ | տոննա | T | tonne |
| մ ² | քառակուսի մետր | m ² | square metre | կմ | կիլոմետր | km | kilometre |
| մ ³ | խորանարդ մետր | m ³ | cubic metre | կվտ/ժ | կիլովատ/ժամ | kWh | kilowatt-hour |
| լ | լիտր | l | litre | տ/կմ | տոննա/կիլոմետր | t-km | tonne-kilometre |
| կգ | կիլոգրամ | kg | kilogram | հա | հեկտար | ha | hectare |
| գր | գրամ | g | gram | % | տոկոս | % | percentage |

Առանձին դեպքերում բաղադրիչների գումարի և արդյունքների միջև աննշան տարբերությունները բացատրվում են տվյալների կլորացմամբ:

In some cases insignificant differences between the sum of items and the results are explained by data rounding.

Ծանոթություն.

ՀՀ-ում շինարարության գների ինդեքսների հաշվարկը 2012 թվականից կատարել է ՀՀ ֆինանսների նախարարությունը (ավելի վաղ՝ ՀՀ քաղաքաշինության նախարարությունը, 2010թ. դեկտեմբերից՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը), իսկ շրթայական և երկարաժամկետային ինդեքսների հաշվարկը՝ ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գների վիճակագրության և միջազգային համադրումների բաժինը՝ ՀՀ ֆինանսների նախարարության «Գնագոյացման վերլուծական ինֆորմացիոն կենտրոն» ՊՈԱԿ-ը (ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀ էկոնոմիկայի նախարարության) կողմից ներկայացված ինդեքսների հիման վրա:

Note.

Starting from 2012 construction price indexes in RA has been calculated by the Ministry of Finance (earlier՝ by the Ministry of Urban Development, from the December 2010 by Ministry of Economy).

The calculation of chain and long-term indexes has been implemented by the Prices and International Comparisons Division of NSS RA, based on the indexes provided by "Information analytical center on pricing" SNCO of the Ministry of Finance of RA.